

1960



ՀԱՅՐԵՆԵԱՅ
1889

ԱՌԱԶԻՆ ԳԻՐԲ

ՄԱՏԻՆՍԻ
ՓԱՓԱԶԵԱՆ

11-16
18
503

Հ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ք


Վ Ա Ն Օ Ր Է Ի Ց

Կ Ա Ջ Մ Ե Ց

Լ Ո Ւ Ս Ա Ն Կ Ա Ր Մ Փ Ա Փ Ա Ջ Ե Ա Ն Ց

Փ յ Կ Ե Ղ Կ Շ Ո Ս Ո

Գ Ի Ն Ն 1 0 Ղ Ո Ւ Բ Լ Ի



Վ Ա Ղ Ա Ր Հ Ա Գ Ա Տ

Ի Տ Դ Ա Ր Ա Ն Ի Ս Ր Բ Ո Յ Կ Ա Թ Ո Ւ Դ Ի Կ Ե Է Ջ Մ Ի Ա Ն Ն Ի Մ

1 8 8 9




ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.



զգի հնութեանց հետազոտութիւնը մեծ ազդեցութիւն ունի նորա կրթութեան վերայ, մանաւանդ եթէ այդ անցեալը փառաւոր է եղած և ներկայի համար հիացման արժանի:

Այսպիսի եղած է և Հայոց անցեալը:


Հնութեանց գննութեան այդ օգուտն աչքի առաջ ունենալով և իբրև հայ Առաքնակար մի տեսակ պարտք վրաս դրած համարելով ձեռնարկեցի, ամենայն նեղութեանց տանելով, կազմելու տեսքներ հայ աւերակների պատկերների:

Առաջին տետրը կազմուած է տասն և չորս լուսանկարներից աւերակ և մի քանի շէն վանքերի. որոնց մեծ մասը Ղազախ և Շամշադին գաւառներումն են:


Առաջին գործիս յաջողութիւնից կախուած կը լինի օգտաւէտ գործիս շարունակութիւնը: Յաջողութիւնը կայանում է ձեռնտուութեան մէջ, որ կյուսամ գտնել բանասէր և հայրենասէր հայրենակցացս նիւթական քաջալերութեամբ: Այս վրտաշութեամբ ահա հանդէս եմ բերում առաջին տետրն, որոյ յաջողակ ընդունելութիւնը պէտք է միջոց տայ միւս տետրակների երևան գալուն, որոց նիւթի մեծ մասն արդէն գրեթէ պատրաստ ունեմ:

Այո՛ւսամ, որ ներկայ բանասէր մեր եղբարքն էլ այնպէս առատաձեռն կլինին այն թանկագին գանձերի գէթ նկարներն աչքի առաջ ունենալու համար ի միսիթարութիւն իւրեանց, ինչպէս առատաձեռն գտնուել են մեր նախնիք այդ միսիթարութեան առարկայք մեզ աւանդելու համար:

ФОТОГРАФІЯ



Худож. - Лит. Р. Шахбазянца въ Тифлиси.



Ս. ՄԱՐԿՈՍԻ ՎԱՆԷ Մ 220

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱՋԵԱՆՑ:

Худож. - Лит. Р. Шахбазянца въ Тифлисе.

Ս • Մ Ե Կ Ե Ր Ե Յ Վ Ե Ն Ք



ոյն վանքը գտնվում է Ղազախի գաւառում: Ուղունթալայ փոշաի կայարանից դէպի արեւմուտք մօտաւորապէս 11 վերստ հեռաւորութեամբ Աչաջուր գիւղի վերելը բարձր անտառապատ լեռան լանջի վերայ: Երկու եկեղեցիներից է բաղկացած. մի կողմը անտառային ձոր է և մի կողմը վազում է մի գետակ, որ անուանում են տեղացիք Մակարայ ձոր և Մակարայ գետ. արեւմտեան կողմը խիտ անտառոտ է իսկ արեւելեան կողմը տափէր, որ ինչպէս տեղւոյն մի քանի ծերունիներն ասացին, վանքին է եղել պատկանելիս և տեղ տեղ արտերի միջին երեւում է, որ ունեցել է այգիներ, ջաղացներ, ձիթահանքեր և այլն. և այժմ՝ բոլորը խլել են գիւղի բնակիչները:

Ունի փոքրիկ մի բակ 10--12 սաժին խորանարդ տարածութեամբ, շինութեան տարին է 26. թուին. հոյակապ և հաստատուն է շինութիւնը, վանքի ներքին և արտաքին կողմերը սրբատաշ մաքուր քարերով է հիւսված. գրեթէ մեծ մասամբ ամեն քարերի վրայ արձանագրութիւններ կան, ծաղկաւոր խաչեր, մաքուր փորագրուած կենդանիներ:

Եկեղեցւոյ մինի վէժ՝ քարը և բեմի ճակատի քարը գեռ մաքուր և անվնաս մնացած է, վրան աղբի աղբի կենդանիներ նկարուած սիրուն և մաքուր փորագրութեամբ, որ մօրգ կորանչանայ: Միւս եկեղեցւոյ քարը չէ մնացել իւր տեղը, սորա բէմի ճակատի քարը տեղափոխել են Աչաջուրի եկեղեցին, որ նոյնպէս մաքուր փորագրութիւն ունի: Սա ունի 10 սիւնադարգ կամարներ, սրանց մէջ մի սիւնը ամբողջ կասրից է բաղկացած, սեղանի երկու կողքերին երեք խորաններ կան մին յա-


տակի ներքեւ, մին յատակի ուղղութեամբ, իսկ միւսը սորա վրայ, ուր սանդուղներով են բարձրանում: գաւթի դրան երկու կողքերին նոյնպէս մէկ մէկ փոքրիկ պահարաններ կան. պատի միջովըն գաղտնի ճանապարհ կայ, որ բարձրանում է մինչև կաթուղիկէի գագաթը:

Եկեղեցւոյ մինին, որ Ս. Աստուածածնայ է, կաթուղիկէն բուրովին կործանուած է, իսկ միւսինը կիսով խոնարհուած: Վանքըս այժմ՝ ոչ վանահայր ունի, ոչ խնամող և ոչ եկամուտ. ունեցել է վերջի ժամանակներս Քրիզոր վարդապետ անունով մի վանահայր. որ սպանվում է. բայց հաստատ չգիտցուի թուրքերից թէ հայերից, սրովհետև իւրաքանչիւր ոք այլ է ասում՝ սորա մասին, այժմ հայր սուրբը չկայ և վանքապատկան հոգ էլ չէ մնացել, բոլորը խլել են գիւղացի մեր հայ եղբայրները . . . մինչև այն աստիճան, որ վանքի պատի հենց կողքիցը սկսած վարում են, չթողնելով մինչև իսկ վանք մանելու համար մի ճանապարհ:

Վանքի արեւելեան կողմը կայ փոքրիկ մի մատուռ, որ տեղացիք անուանում են կոյս Հոփոսիմէի, բայց ճակատի արձանագրութիւնից՝ ինչպէս կարդացվում է «Վասակայ, Շուշանկանըն . . . և այլն և Քրիստոսի չորսարանքի զօրութեամբ նշով է կարգում, այնտեղ արարողութիւնը խաբանողին:



ФОТОГРАФІЯ




Худож. - Лит. Р. Шахбазянца въ Тифлисе.





ԸՆԴՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

ФОТОГРАФІЯ



Худож. - Лнт. Р. Шахбазянца въ Тифлисе.



ԷՌԻՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Худож. - Лит. Р. Шахбазянца въ Тифлисъ.

Ի ճուղիի ճանապարհի վրայ Ուզունթալաի փոշտի կայարանից մօտ 2 վերստ Ուզունթալա կոչուած գիւղի կողքին, այնպէս, որ գիւղեց մէկ ու կէս վերստաչափ բարձր սարի լանջին վրայ տեղաւորուած մի ուխտատեղի է Սուրբ Նստուածածին անունով, բայց Սրվեղ անուանեալ ուր ամենայն թէ մօտակայ և թէ հեռաւոր տեղերից գալիս են այս տեղ ուխտի, զօրաւոր համարում և մատաղ են կտրում:

Եթէ կենդանեաց մէջ հիւանդութիւն լինումէ՞, բերում է կենդանիների տէրը եղ, ոչխար, և այն մատաղ է անում և ամբողջ հօտը աղատվում է ցաւից: Ամբողջ վանքը աղիւսաշէն է, բայց՝ հին խարխուլ գրութեան մէջ, ոչ մի արձանազրութիւն չունի, արարողութիւն կատարում են ամենայն տաղաւարին գիւղի քահանաները. այս ևս չունի եկամուտ բացի մատաղացունների մօրթերից, որի գումարը ինչպէս ասում են հասցնում են Թիֆլիզի Ներսիսեան դպրանոցին, այն ևս տարեկան 20—25 ռուբլու չափ, իսկ եթէ հողերի մասին, որ հարցնենք, ծերունիներից մինչև երիտասարդնե-

րը ցոյց են տալիս, թէ, ահա այս խաչի տեղն է, այն խաչի այգին է և միւսը խաչի հողն է և այն, մի առ մի ցոյց են տալիս, բայց իսկապէս վանքը ոչինչ ունի:

Վանքի կողքին կայ մի ընդարձակ հող, որ վարելիս է եղել 5 տարիի չափ տեղւոյն քահանայ տէր Մկրտիչը, բայց յետոյ տուրք են պահանջել գիւղացիք և սա թողել է. այժմ մնացել է կենդանիք արածացնելու տեղ: Գիւղումը կայ մի եկեղեցի Սուրբ Նստուածածին անունով և մին էլ շինվում է, առաջինին կից երկու սենեակներից բաղկացած կայ մի ուսումնարան բայց դատարկ, պահպանող չունի. մտադիր են խնդիրք տալ ուր հարկն է, որ Սրվեղի վանքին ուխտաւորների համար մօմավաճառութիւն հաստատել և գոյացած արդիւնքը թէ մօմի և թէ մատաղի բաժանել, մի մասը տեղւոյն ուսումնարանին և մի մասը դարձեալ Ներսիսեան դպրանոցի համար:




Մ. ԳՈՒԶԵԱՆՑ

М. ПАПАЗЯНЦЪ

Մ. ԳՈՒԶԵԱՆՑ ԵՎ Մ. ԳՈՒԶԵԱՆՑ ԵՎ Մ. ԳՈՒԶԵԱՆՑ

ФОТОГРАФІЯ



Худож. Лит. Р. Шалвазянца въ Тифлисъ.



ՎՈՐԱԳԱՅ Ս. ՆՇԱՆ ՎԱՆԻ № 238

ԸՆԴՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱՋԵԱՆՑ:

Худож. Лит. Р. Шалвазянца в Тифлисе.



ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄԻՆՈՒԹՅԱՆ ԱՄ 223

ԷՆԻՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱՋԵԱՆՑ:

Худож. - Лит. Р. Шахбазянца въ Тифлисе.

Մ. ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔ



Մյս Մ. Առաքելոց վանքը գտնվում է Ղազախի Ուղունթալա փոշտի կայարանից շեղուելով դէպի աջ, մօտաւորապէս 32 վերստաչափ Տեաւորութեան վրայ: Մի քանի հայաշէն գիւղերից անցնելով, որոնք են Աչաջուր, Աւ քար, Մելիք գիւղ և Կունեն յետոյ անտառային ձորի միջով վտանգաւոր ճանապարհաւ մը գնալ կհարկաւորի:

Առաջին անգամ երբ կամենում էինք միայնակ երթալ այս վանքը բարեկրօն տէր Պետրոս քահանայ Վարչամեանցը յետ դարձրեց զգուշացնելով. որ վտանգ կայ:

Տասն և հինգ օրից յետ, երբ գիւղացիք ազատ էին իրանց պարապմունքներից Քարվանսարայից փափակ յայտնեցին և մեզ Տեա ընկերանալով եկան նորնծայ տէր Մեսրոփ քահանայ Լստիլեանցը և դպիր Արշակ տէր Ղուկասեանը ու գիշերուայ 11 ժամին սև Քար հասանք Վարչամեան տէր Պետրոս հօր տունը:

Երկրորդ առաւօտուն մեր տան առաջ արդէն պատրաստ էր 20 ից աւել զինւորուած քաջ երիտասարդներ իւրեանց տանուտէրով, ուրախու-


թեան չափ չկար և մեզ պաշար բաւականին է: Անցնելով վերոյիշեալ գիւղերից՝ թողնելով մեր աջ կողմը մի քանի գիւղեր ևս իջանք մի խորը անտառային ձոր. Կունենից 10 վերստ Տեաու ճանապարհին մեր ընկերները թեքուելով դէպի աջ 3 վերստ Տեաու մի բարձր բլրակի վրա բարձրացանք և արդէն վանքը մեր առաջն էր. յայտնեցին որ սա է առաքելոց վանքն, բայց ի՞նչ կտեսնէ մարդ:

Երբ ներս մտանք հակառակ մեր բոլորիս ջերմեւանդութեան, եկեղեցւոյ յատակը մօտ արշնաչափ բարձրութեամբ խողի աղբով ծածկուած էր, հրամայեցին մեզ Տեա եղած երկու քահանայք աղբը մաքրել և դուռը կարելոյն չափ ծածկել բարերով:

Այս ևս հինաւուրց ժամանակի մի վանք է, բայց որ ժամանակի շնութիւն լինելուն ոչ մի թուական չերևեցաւ մեզ:


Փոքրիկ մի մութը գաւթով մտնվում է եկեղեցին, փոքրիկ երեք լուսամուտներով և մի խորանով, վայելուչ կաթուղիկէիւ ներքին և արտաքին կողմերը շինուած են մաքուր սրբատաշ քարերով, սա ևս ունի գաղտնի պահարան, որն որ եկեղեցւոյ ներքեւ է գտնվում, և շատ դժուարին և գաղտնի ճանապարհով մը իջնում է ներքև, մութը և բոլորովին դատարկ:

ФОТОГРАФІЯ



У. ФІЦЦЕЛІС:
М. ПАПАЗЯНЦЪ
КАВКАЗЪ

Худож. - Лит. Р. Шахбазянца въ Тифлисі.



ԳՐԱՆՑԱՆ ԳԱՆԻ N 221

ԷՌԻՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Худож. - Лит. Р. Шахбазянца в Тифлисе.

Սա Մխիթար Գօշի վանքն է. վանքից քիչ հեռու գիւղի վերեւը գերեզմանը կայ հասարակ շինուածով մը ծածկուած. գտնվում է Աղստաֆու խճուղիի ճանապարհի «չարխաչ» կայարանի դէմի ձորով 7 վերասի վերայ 18—20 տուներից բաղկացած, գիւղի միջին կայ մի քահանայ տէր Աւետիս անուանով. վանքս այս խիստ փառաւոր է թէ ներքուստ և թէ արտաքուստ:

Ունի ընդարձակ և սիւնազարդ գուլիթ մը փոքրիկ կաթուղիկէիւ, որ այժմ փուլ եկած է և երկու զանգակ է կախ արած նորա տեղ, այն գաւթից մոնում են տաճարը Ս. Աստուածածին անուամբ, գլբեթաւոր և մի խորանով, ժամերգութիւնը այս տեղ է կատարվում, սեղանի օճեալ քարի վերայ երկու դրան փեղկեր դրուած իբրև խաչկալի տեղ. երկու մամակալ և մէկ աւետարան, երկու էլ շատ հասարակ կանգեղ. սոցանով վերջանում է եկեղեցւոյ զարդը. խորանին մէջ բոլորովին ծածկուած է արձանագրութեամբ, որ մէկ տեղը փորագրուած և որ մէկ տեղը կարմիր ներկով գրուած:

Սոյն աւագ եկեղեցւոյ աջ կողմից մի դուռը տանում է մի այլ շինուածք, որ զանգակատունն է եղած և որուն կաթուղիկէն համարեայ բոլորովին խոնարհուած, դարձեալ աւագ եկեղեցւոյս կից կայ փոքրիկ մի մատուռ, որոյ դրան երկու կողքերին մաքուր և հիանալի քանդակագործուած խաչքարեր կան կանգնեցրած. խաչ քարի միոյն վրայ փորագրուած է ՊԱԻՂՈՍ. շինողի անունն է թէ ընծայողին, յիշատակութիւն չկայ. մատուռիս ներքին կողմը դարձեալ սիրուն փորագրութիւններով ծածկուած են պատերը, ուստի և տեղացիք սորան ծաղկաւոր Ս. Նշան են անուանում, սոյն մատուռի ետեւը կայ նա և փոք-

րիկ երեք արշին լայնութեամբ նոյնչափ էլ երկարութեամբ մի այլ մատուռ էլ:


Վանքի հարաւային կողմը վանքի շինութեանը հաւասար և կից կայ մի այլ փոքրիկ մատուռ, որոյ բոլորովին խաչքարերով լիքն են, այս տեղ է և արեգակնային ժամացոյցը, թէ վանքի կողքերին թէ գիւղի միջերբում և թէ մօտակայ բում բազմաթիւ խաչքարեր կան թէ ողջ և թէ կոտրուած, կոտրուածներին թիւ չկայ:

Մենք միայն երկու խաչքարեր նկարելով, ուղեցանք բաւականացնել մեր հայրենասէրներին, որ անշուշտ մեզ հետ կըքանչանան թէ գեղեցիկութեան և թէ նախնի ժամանակների արհեստաւորների շնորհքի վրայ:

Գիւղի մէջ ոչ հեռի Գօշ Մխիթարոյ գերեզմանիցը, կայ փոքրիկ քառակուսի ձևով 4. արշինի վերայ մատուռ մաքուր և սրբատաշ քարերով Ս. Գէորգ անուանով, սորա միջի հողը բաւականին փոս էր կազմել, փոսի պատճառը հարցրինք. մեզ հաւատացրին թէ ամեն եկող ուխտաւորներ մի մի ափ հող հետերնին կտանեն եղել. որն որ իւրեանց արտերուն և աներնուն մէջ թափ տալով թէ արտերի մկներն կ'ոչնչացնէ և թէ սոցա վնասից ազատ կ'պահէ: Այս վանքն էլ եկամուտ չունի. գիւղի կողքին բոլորը յիշում են վանքի հող, բայց հեռու գիւղի թուրքերն են վարում. գիւղացիք պատկառանք են յիշում երեւանցի մի Վախթանգ աղայի անունը, որ վանքի ճանապարհը շինել է, վանքի հողերի համար աշխատում է եղել իւր ժամանակին:

Տարօրինակ է թվում, որ գիւղի միջի հողը՝ վանքին կից հողը՝ վանքը կամ գիւղացիք չվարեն այլ թուրքերն. այն էլ հեռաւոր գիւղի թուրքերը:

ФОТОГРАФІЯ



Худож. - Лит. Р. Шахбазянца въ Тифлисъ.



ԳՕԵ ԴԵԲԵԱՐԱՅ ՎԱՆԻ ՍՐԵՒՆԵԱՆ ԿՈՂՄԱՆԷ № 239

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Худож. - Лит. Р. Шахбазянца в Тифлисе.

Ս. ՎԱՐԱԳԱՅ ՎԱՆՔ



Ազուենթալաի Սրվէղ վանքը նկարելէ վերջ միտք սորանից 3 ժամուայ ճանապարհ կհաշուելի ինդրելով տանուաւերից որ մի ուղեցոյց տայ ինձ:

Առաւօտ վեր կացանք պատրաստուեցանք, բայց ուղեցոյցս չէ գնումս ասելով թէ ահ կայ մենակ չեմ գալ, ի՞նչ պէտք է անէինք. երկու հոգի ևս վերցրինք, ընկանք ճանապարհ. 3 վերստաչափ գնալից յետոյ ձին չէ գնում. ճանապարհը դէպի զառի վեր դժուարին է բարձրանալը սորա վրայ աւելացնենք սարի վրայի ձիւնը, մտածեցինք որ ձին չպիտի կարողանայ գնալ, յետ ուղարկեցինք ձիւնը. մենք մնացինք հեախոսս. ետք հոգևով ընկանք ձիւնի մէջ, ոչ մի անցաւորական չէ անցել, բարձր անտառօտ սարը պէտք է բարձրանալ և անցնել Շամշաբինի գաւառը: 3 1/2 ժամից երեւեցաւ վանքը, հիացայ երբ տեսայ սարի վրայիցը դէպ ներքեւ փոքրիկ մի բլուրի վրայ տեղաւորուած մի հոյակապ շինութիւն, բայց պէտք էր իջնել այժմ խորը անդրնդային մի ձոր. ուղեցոյց ընկերներին հարցնում եմ թէ ո՞ր կողմից պիտի իջնենք և ի՞նչ ճանապարհով, այժմ ճանապարհ ասացին և, թողեցին զերենք ձիւնի մէջ. սահնակի նման ներքեւ են իջնում. մնացի մենակս վերեւ, վախը առաւ ինձ. տեսայ որ յիմարութիւն կլինէր նրանցից բաժանուելը, նմանեցայ նրանց՝ այսպէս սահնակի նման մինչև ձորը իջանք. յետոյ բլուրի վրայ բարձրացանք, այս տեղ կատարեալ ամառուայ չորութիւն է:

Եղած բլրի գագաթից երկու հարիւր քայլաչափ ցածր շինուած է վանքը. երեք կողմը զառ ի վայր, այնպէս որ վանքի բարձրաւորը 8 արշինաչափ անգամ բակի տեղ չկայ, ընտրեցինք մի գառ ի վայր տեղ ու նկարեցինք: Հարաւային գրան վրայ արձանագրութիւն

սւնի, « շինեալ (22) թվ. առանց առատաղի և առանց կաթուղիկէի չորս պատեր և յատակի վրայ խոշոր սրբատաշ քարեր կուտակուած են. այս եկեղեցի է Ս. Աստուածածնի անուամբ և իսկապէս պէտք է լինի գաւթի, որոյ միջով մտնում են Ս. ՎԱՐԱԳԱՅ անուամբ (26.) թվ. կառուցուած եկեղեցին. որ անխախտ և անմնաս մնացած է կաթուղիկէի և ամենայն պարագայիւք, մաքուր՝ սրբատաշ և գայն զգայն սիրուն քարերով, ճարտարապետութիւնը կատարեալ է: Սոյն երկու եկեղեցեաց կողքին կայ փոքրիկ մի եկեղեցի ևս, սորա վրայ արձանագրութիւնն էլ անուանում է « եկեղեցիս այս Ս. Նշան. ի ժամանակի Բագրատունեաց թագաւորութեան Վասակայ թոռն իշխան . . . և այլն, թուական չէ գրուած. սորա ևս չորս պատերն կան հաստատուն իսկ կամարը փուլ եկած. միայն քարերը կան կուտակուած նոյնպէս մաքուր և սրբատաշ:

Այս վանքը միւսներից հարուստ է եղել արձանագրութիւնների նայելով, և մինչև Ռուսաց տիրապետութեան ժամանակ կառավարում է եղել իւր արդիւնքով: Բասկեվիչ իշխանի Գանձակու բերդին տիրանալու ժամանակ վանքիս վանահայր Գրիգորին եպիսկոպոսը՝ իւր մօտ գանսուղ վանքի կալուածաթղթերը ներկայացնում է—1826 թուականին յիշեալ իշխանին ի հաստատութիւն. այդ թղթերը մինչև այժմ կան և մենք տեսանք: Սրանց մէջ բոլոր սահմանները նշանակուած են մանրամասնաբար: Գրիգորին եպիսկոպոսի վախճանմանէն յետոյ բոլորը կորչում է միայն անցեալ 87 թուականին գալիս են երկրաչափները գիւղային հողերը չափելու և թողնում են մի մասնաւոր անառոտ լեռ իբրև վանքի սեպհականութիւն:

Վանքում ամենայն տաղաւարի ժամերգութիւն է անում


մօտակայ Հախում գիւղի ծերունի տէր Սողոմոն Մանուչարեանցը և բաւականին ուխտաւորներ են գայի մօտիկ և հեռաւոր տեղերից, այս ուխտատեղու արգիւնքն էլ պատկանում է Ներսիսեան դպրանոցին:

Գիշերս մնացինք տէր Սողոմոն Մանուչարեանցի տանը Հախում գիւղում, որ վանքից 3 վերստ հեռու է, գիւղի միակ քահանան սա է, տկար և ծեր. անկողնումը գտանք զինքը հիւանդ, որպիսութիւնը հարցնելու զըջացինք, որն որ սկսեց լաց

լինել, որովհետև անցեալ 87 ի օգոստոս ամսոյ հեղեղին զոհ է տուել բացի անասուններից 8 հոգիք ևս տանից, հարսը, որդին, և թոռները, և այս նրա ծերութեանը վրայ շատ վատ ազդեցութիւն է ունեցել, ինչպէս այժմ երկու օր լաւ, հինգ օր վատ. այսպէս ժամանակ է անցնում:

Առաւօտուն վաղ դարձեալ նախորդ օրուայ նման մեր ճանապարհը շարունակելով եկանք Ուղունթալա:

ФОТОГРАФІЯ



Худож. - Лит. Р. Шахбабянца въ Тифлисъ.




ՀԱՂԱՐԾՆՈՅ ՎԱՆԲ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿՈՂՄԱՆԻ № 231

ՔՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱՉԵԱՆՑ:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисе.

ФОТОГРАФІЯ



Худож. - Лнт. Р. Шахбазянца въ Тифлисъ.



ՀԱՂԱՐԾՆՈՅ ՎԱՆԻ ՀԻՒՍ — ԱՐԵՒՄՏ. ԿՈՂՄԱՆԷ № 235

ԸՆԴՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Ա. Առաքելոց վանքից 7 վերստ դէպի արեւմուտք Նոյն անտառային ձորի ճանապարհով, գետից մէկ վերստաչափ բարձր տափի վրայ աղիւսով շինուած և բարձր կաթուղիկէով. երկու մեծ դռներ ունի մին հարաւային կողմից և մին արեւմտեան:


Արեւմտեան դրան հանդէպ ունի մի քարուկիր միայսրկ ընդարձակ շինութիւն, որ ժամանակին միաբանութեան սեղանատունն լինել կկարծուի, սորա կողքին սենեակներ կան, որ այժմ աւեր են. միայն կիսակործան պատերն են երեւում բաժանմունքներով. նոյնպէս վանքից ոչ այնքան հեռի շինութեանց հետքեր են երեւում որ բաւական ընդարձակ են: Կան շատ գերեզմանաքարեր. որոնց արձանագրութիւնները անհնարին է կորդալ. և մինչև անգամ Հայոց տաւեր լինելուն երաշխաւոր չլինիր մարդ:

Չնայելով մեր աշխատանքին ոչ մի թուական՝ և ոչ իսկ կաթուղիկէի մէջը ուր ծածուկ ճանապարհներով բարձրացանք, անհնար եղաւ գտնել. նկարների կողքերին անընթեռնելի դրուածքներ կային բայց անհարազատ ձեւքերը այնպէս եղծել էին, որ կարգալ անկարելի է. մի ոմն Մելիք ժողովրդի ասելով քանդել է տուել բոլոր արձանագրութիւնները, և իրաւի յայտնի երեւում է գիտմամբ քանդել տուած լինելը, որովհետև երկու մեծ դռների կողքի քարերուն վրայ երեւում են մրճի հարուածների նշաններ, թէ ի՞նչ գիտաւորութեամբ ոչ ոք չէ կարողանում հաստատապէս գիտենալ. ոմանք ասում են որ շինողի անունը չիշատակուի, և ոմանք վանքապատկան հովերը Մե. իբբ իւրացիելու համար քանդած լի ի:

Հաւատացրին մեզ, որ անցեալ տարի կաթուղիկէի վերին ծայրում, որ վնասուած է, մեզուները այնքան մեղր են շինած եղել, որ Ց բեռ թուրքերը ծախել են. բարձրացանք թէև մեզուներ չտեսանք բայց հետքերն երեւում էին:

Մեր գործը վերջացնելով և ուխտերնիս կատարելով հոգեհանգիստի կստարմամբ, իջանք ճանապարհին վրայ ՉԱՅ—ՂԱ—ՎՈՒՇԱՆ ասուած կամուրջի կողքը. մի փոքրիկ կանաչազարդ դաշտի վերայ, ուր համեղ կարմրախայտ վայելեցինք բացի երկու քահանաներից, ըստ որում օրը պահք էր. կէս գիշերին ամենազժուար ճանապարհներ անցնելով մտանք սև քար գիւղը տէր Պետրոս հօր տանը գիշերելու. ուրախ տրամագրութեան տակ գտնուելով և մեր խորին շնորհակալութիւնը իւրաքանչիւրին յայտնելով. բայց առաւօտուն պատուած շորերով վերագարձանք Դիլիջան:

ФОТОГРАФІЯ



Худож. - Лнт. Р. Шахбазянца въ Тифлисъ.

XX Կաթուղի



ՎԱՆԻ ԳՕԵ ՄԻՒԹԱՐԱՅ ՆՁ 218

ԸՌԻՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Հ Ա Ղ Ա Ր Ծ Ի Ն



Պիլիճանից 9 վերստ հեռու Խճուղու ճանապարհից շեղուելով դէպի ձախ սկսանք բարձրանալ անտառապատ լեռոն և շատ ել և էջներ անցնելով հասանք հաղարծնի հռչակաւոր վանքըն, որ ունի վանահայր. որովհետև վտակների վրայից մի քանի անգամ անց ու դարց անել էր հարկաւոր մինչև սարի վրայ բարձրանալը. այն ահագին անտառի մէջ լինում է լօրի, կաղնիի, հացի, բեկոն, քարաղաջ և այլն. ազնիւ ծառեր. որ կապալով վերցբաց են իւրաքանչիւր ոք, ինչպէս անձևորական տեսնում էինք մի քանի տեղեր անծուխ են պատրաստում: մի քանի տեղեր էլ փայտ են կտրում վառելիքի համար, և մի քանի տեղեր խրխում են շինութեանց համար պատրաստելու 8—10 սաժեն երկարութեամբ ծառեր. սոյն անտառիցը վանքապատկան էլ կայ. որ մի ժամանակ խլել են, ինչպէս տեղեկացանք դիլիճանում:


Ներկայ վանահայրն է Պօղոս վարդապետ Մարգարեանց. որ բաւական ժամանակ է հէտ կառավարում է վանքն և դատ է վարում նորա կալուածոց մասին:

Ինչպէս երևում է արձանագրութիւնից 710 տարուայ շինութիւն է. ունի երեք եկեղեցի. մին մինի քով շատ մօտիկ. յանուն Սուրբ Ստեփաննոսի, Սուրբ Գրիգոր Լուսաւորչի և Սուրբ Եստուածածնի. առաջին երկուսը համարեայ խախտուած են, երրորդիս մէջ են կատարում ժամերգութիւնը:


Ունի ընդարձակ սեղանատուն:

Ոչ ոք չէ բնակվում այստեղ բացի վանահայրից և մի սարկաւազից, մի տնարար և մի ծառայից: Ունի բաւականին վարելահող. ջրաղաց, կովերի ու եզների մի հօտ, ունեցել էր փոքրիկ խաշն ոչ խարների ու այծերի, որն որ այս մօտ ժամանակներս աւազակների ձեռք էր անցել, եկեղեցեաց կողքին կայ գերեզմաններ ըստ ասից Գազիկ, Սմբատ, և Յովհաննէս թագաւորներու. Սուրբ Գրիգոր Լուսաւորչի տաճարի վրայ կայ ընդարձակ արձանագրութիւն. որ հրատարակուած է: Վանքի մօտերքը կան երեք կիսակործան փոքրիկ շինութիւններ կողքերը խաչքարով, բայց ի՞նչ են սոքա. մատուռ թէ գերեզման, անյայտ է չունեն ոչ մի արձանագրութիւն:

ФОТОГРАФІЯ



Худож. - Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.



ՋՈՒԻՏԱԿ ՎԱՆՔԵՐ № 229

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Худож. - Лит. Р. Шахбазянца въ Тифлисе.

Ջ ՈՒԽ Տ Ա Կ Վ Ա Ն Ք

† **Դ**իւլիջանից դէպի մեծ Ղարաքիլիսէ տա-
նող խճուղի ճանապարհիցը աջ 7 վե-
րատաչափ Տեռաւորութեամբ անտառային ձորի
միջին գտնվում է սոյն վանքը, երկու փոքրիկ
եկեղեցիներից բաղկացած, խեղդուած խիտ առ
խիտ ծառերի միջին այնպէս, որ հազիւ կարելի է
նկարել:

Մինք խոնարհուած կաթուղիկէիւ իսկ միւսը
չունի կաթուղիկէ, փոքրիկ գիւղային մի եկե-
ղեցու նման, կիսակործան դրութեան մէջ:

Այս սրբատաշ քարերով շինած վանքը Դա-
լիտ և Խաչատուր անունով քոյր և եղբայրների
շինած լինելու համար զորոք է անուանվում:

Եկեղեցեաց կողքերին շինութեանց հետքեր
կան, հիմնաքարեր, փուլ եկած պատեր, նոյնպէս
կալի ձև ունեցող հարթ տեղեր, փոս տեղեր և
այլն, վերջապէս ով որ լինի կհաւատայ, որ մի

ժամանակ գիւղի տեղ եղած լինի այս տեղ, որ
այժմ անտառի ձև է առել. վանքումը ոչ մի
տեղ շինութեանս հաստատութեանը համար ար-
ձանագրութիւն չէ երևում. բացի հարաւային կող-
մի պատի վրայ եղծեալ մի արձանագրութիւնից,
ուր Դալիտ և Խաչատուր անունները կարդաց-
վում են յիշե՛ք ոգի բառերով, սոցա վերայ հիմ-
նուելով, մօտակայ Պօղոս քիլիսեցի գիւղացիք
հաստատում են ձերոց բերանացի աւանդութիւնը
թէ քոյր և եղբայր շինել են:

Ամենայն կիրակի գալիս են այստեղ մօմ վա-
ռում և համբուրում և գնում:

†


2 0 1 4 2 1 4



Faint, illegible text in the left column, possibly bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text in the right column, possibly bleed-through from the reverse side of the page.

ФОТОГРАФІЯ




Худож. - Лит. Р. Шахбазянца въ Тифлисе.



ԳՐԻԳՈՐ ԵՒՆԵ Ք 460:

Худож. - Лнт. Р. Шахбазянца въ Тифлисе.

ФОТОГРАФІЯ



Худож. - Лит. Р. ШАХБАЗЯНЦА ВЪ ТИФЛИСѢ.



ՍԵՒՈՂՈՅ ԱՌՈՒԲԵԼՈՅ ՎԱՆՔԸ № 468.

ԷՆՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Худож. - лит. Р. Шахбазянца въ Тифлисе.



Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

М. ПАПАЗЯНЦЪ

Յայտնի և անուանի Սևանայ ծովն և կրդ ղն, ուր ի հնումն Սիւնեաց ազգի մեհեանն էր կառուցուած ամուր պարսպով և զղեակով, որն որ Փրկչական 303 թուին Ս. Գրիգոր Առաջնորդին գալով սրբազործում և օծում է եկեղեցի Ս. Յովհաննու Մկրտչի անուամբ. այժմ կան երկու փոքրիկ եկեղեցի միմեանց մօտ և որուն մինը անուանվում է յանուն երկոտասան առաքելոց, վերջինը Սիւնեաց Աշոտ թագաւորի դուստրը Մարիամ տիկինը՝ Եղեվարդեցի Մաշտոց վարդապետի օրով թ. Հայոց Յ102. նորից շինում է երկու եկեղեցիները և միաբանութեան համար սենեակներ. սոցա աւերակ պատերն ղեռ երևում են:

Կղզւոյ ստորոտը տափարակ տեղում կանգնած են Ս. Աստուածածնի անուամբ սաքաշէն եկեղեցի և, սենեակներ միաբանաց բնակութեան համար. և այս վերջինս նորոգութիւն է ունեցել Տփլիս քաղաքացի Չիթաղեանց Խօջա Սուլուխան, Օալէ և Օօհրապ երեք եղբայրներէ. ի թ. (ՌՃԺ.): Միաբանութիւնը այստեղ է կատարում ժամերգութիւնը:

Ս. առաքելոց եկեղեցին երկու դռներ ունի՝ արևմտեան և հարաւային կողմերը «դռն» փայտից, որն որ հեանալի փորուածք և սքանչելի ճարտարապետութեամբ նկար ունի, մանաւանդ հարաւային դուռը, որն որ արժան համարեցի նկարե-


լու. որոյ վրայի դժուարաշնթեռնելի արձան պղրութիւնը ոտանաւորի ձևով այս պէս է:

ԶՀԱ թուականին
 Երեսուն և հինգ թիւ աւելի
 Յաթուակալութեան տեան Սարգսի
 Ի խանութեան Աղուպ պէկի
 Ծաղկեցաւ դուռն տաճարի,
 Առաքելոցն Քրիստոսի,
 Հրամանաւ Ս վարդապետի,
 Եռամեծիս Գանիէլի:
 Եւ սիրելի որդւոյ սորին,
 Եպիսկոպոս տէր Ներսիսի:

Չեռամբ սորին աշակերտի,
 Անարժանիս Աբրահամի:
 Նաև եղբոր մեր սիրելի,
 Շնորհօք իլի Գրիգորի,
 Յօտս անկանեմ ամենայնի,
 Հայցել տեառնէ պարբէ ձրի:
 Բարունապետիս համայն ազգի,
 Եւ ծնողացն իւրոց բարի,
 Կարապետ քահանայի,
 Եւ մօրն համաւորի:

Վանուս վանահայրն է Կարապետ վարդապետ Տիւլբիւլեան: Աւելորդ է ասել կղզւոյս ուխտագնացութեան մասին, որովհետև պարունակում են այս տեղ և սրբութեամբ պահվում: 874 թուին Մաշտոց վարդապետի օրով Աշոտ իշխանաց իշխանը ուխտի եկած ժամանակ ընծայում է փրկչական նշան Աստուածնկալ Ս. Խաչն. կան նաև Ս. Յովհաննու Մկրտչի նշխարաց մատուները, Պետրոս առաքելոց, Ս. Գէորգայ զօրավարին և այլն:


Սևանայ վանքի եկամուտն են մի քանի մասնաւոր կալուածներ զոր օրինակ թիֆլիզում, Արևանում և այլ տեղեր. որոնցից գոյացած հասոյթովը հազիւ վանքը կարողանում է իւր միաբանութիւնը կառավարել, որ բաղկանում է 30ից աւել անձինքներից, որոնցից 10ը վարդապետներ են, երեքը աւագ սարկաւագ, դպիր և այլն:



Մ. ՓՈՓՈՂԵԱՆՑ


М. ПАПАЗЯНЦЪ

ФОТОГРАФІЯ




Дир. Р. Шкавериди въ Тифлиси.

ՄԻՍՏՐԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՍԻ ԿՈՒՆՔԻ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԱՏՈՐԱՏԻ ՄԻՍՏՐԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՍԻ ԿՈՒՆՔԻ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԱՏՈՐԱՏԻ



ՔՆՆԱԳՆՈՒՄ ԵՄ ԿՈՒՆՔԻ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԱՏՈՐԱՏԻ




321 ԼՈՐ ԳԻԳԻ ԵՎԳ. ԱՐԵՎՄՏ. ԳՈՒՐԸ

ԸՌԻՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱՋԵԱՆՑ:

Худож. Лит. Р. Шахбазянца въ Тифлисе.

ФОТОГРАФІЯ



Худож. - Лит. Р. Шахбазянца въ Тифлисъ.



ԻՐԱՆԻ ԳՈՂ ՄԿԻՐՈՒՄ 210




ԻՐԱՆԻ ԳՈՂ ՄԿԻՐՈՒՄ 211

ԸՆԴՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ.

Худож. - Лнт. Р. Шахбазянца въ Тифлис.

ФОТОГРАФІЯ



Худож. - Лит. Р. Шакбазянца въ Тифлисе.

E-2001

200,33

ՀՀ Ազգային գրադարան



NL0500180

